ԽՍՀՄ ԱՆՏԱՌԺՈՂԿՈՄԱՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ

# ՀՐԱՀԱՆԳ

1. ՀՍԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ ԱՆՏԱՌՈՐԻՆԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԱ-ՊՆԴԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ․

2. ԲԱՆՎՈՐԱԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԶԻՆ-ՎՈՐՆԵՐԻՆ ՈՒ ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻՆ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԸՆ-ՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՀՍԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱ-ԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՏԱՌՆԵՐԻՑ ՓԱՅՏԵՂԵՆ ԲԱՑ ԹՈՂՆԵԼՈՒ ՅԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՂՄՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՑ ՈԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ։

ԱՐԽԻՎ

ԳՅՈՒՂՀՐԱՏ 1934 ՅԵՐԵՎԱՆ

Սրբագրիչ՝ Ե. Այվազյան
Հանձնվել է արտադրության 1934 թ. մայիսի 13-ին,
ստորագրված է տպագրելու 1934 թ. հունիսի 14-ին։
Գլավլիտի լիազոր 252. Հրատ. № 96. Տիրաժ 1000
Պատվեր № 346. Ժեկ տպագր. Թերթում 76800 տպ. նշ.

ԵՐԵՎԱՆ, ԳՅՈՒՂՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, 50

11-27445 գր
22 DEC 2017

# ՀՐԱՀԱՆԳ

## ՀՍԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ ԱՆՏԱՌՕՐԻՆԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԱՊՆԴԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

§ 1. Քրեական Օրենսգրքի հոդ. 110-ով (ՀՍԽՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1933 թվի մայիսի 22-ի վորոշումը, Որ.՝ և, Կարգ. Ժողով. № 1, հոդ. 10) հետապնդվող անտառօրինախախտումների թվին պատկանում են.—

ա) դալար կամ չորացած ծառերի և թփուտների ինքնակամ հատումները, թեկուզ այդպիսիք միան կտրված տեղում, այլև այդպիսիների կտրելը վոչ այն տեղում կամ այն տեսակներից, ինչպես այդ նշված է անտառահատման տոմսում.

բ) անտառից և անտառային տեսքերից ապօրինի օգտվելը. սրա մեջ մտնում են.—

1. անտառից հողմահար, կտրված ծառերի ու թփուտների և շրջանտառարդյունտեսության փայտամթերումների գողությունը.

2. ինքնագլուխ անասուններն արածեցնելը.

3. ինքնագլուխ խոտ հնձելը.

4. ինքնագլուխ ծառապտուղներ հավաքելը,

5. ինքնագլուխ քարի, կավի, ավազի հանույթներ և այլ պեղումները, փեթակներ դնելը և այլն.

6. ինքնագլուխ անտառային տարածությունների այլ հողատեսքերի վերածելը, այսինքն՝ անտառային տարածության ինքնագլուխ մաքրումը, կոճղհանումը կամ հերկելը.

7. անտառներում ինքնագլուխ ճանապարհներ և քարշուղիներ անցկացնելը, պահեստներ և այլ շենքեր կառուցելը և այլն.

գ) ծառերին վնասներ հասցնելը, այսինքն՝

1. քյառթանշելով, կեղևահանելով և այլ միջոցներով ծառերը վնասելը.

2. կրակով անտառին վնասելը—անտառը հրդեհից պաշտպանելու ընդհանուր պարտադիր վորոշումների չպահպանելը.

3. կուլտուրաների վրայով չարահետ կամ ճանապարհ անցկացնելը, ինչպես նաև անտառի բնական վերանորոգումը և անտառային այլ կուլտուրաները պաշտպանելու նպատակով կառուցված ցանկապատերի վոչնչացնելը կամ վնասելը։

Չթույլատրված ժամանակ, չթույլատրված տեղերում, և չթույլատրված յեղանակներով ու ձևերով վորսորդությունն ու ձկնորսությունը։

§ 2. Քրեական Որենսգրքի հոդ. 87, 97, 104, 123, 135 136, 137, 154, 193 և 206 II և III մասերով հետապնդվող անտառորինախախտումների թվին պատկանում են նաև.—

ա) աշխատանքային և տրանսպորտային պարհարկի կարգով անտառային հրդեհները հանգցնելուն մասնակցելուց հրաժարվելը, Քրեական Որենսգ. հոդվ. 87-ով.

բ) անտառային որենքները խախտողների կողմից անտառային վարչա-տեխնիքական պերսոնալին դիմադրելը, վերջիններիս ծառայական պարտականությունները կատարելու ժամանակ, Քր. Որ. հոդ. 97-ով.

գ) եր ժամանակին անտառային հրդեհների դեմ պայքարելու նախազգուշական միջոցներ չձեռնարկելու համար՝ շրջանտառտ. տնտեսությունների վարիչներին և պաշտոնատար այն անձանց, վորոնց վրա դրված է այդ պարտականությունը, հոդ. 104-ով.

դ) անտառում դիտավորյալ վոչնչացումներ ու վնասումներ կատարելը.—

1. հեռախոսի ցանցի լարերը հանելու միջոցով, նրանց վրա զանազան իրեր գցելով, ինչպես նաև այլ միջոցներով, այլև անտառային տնտեսության մեջ դրված ծրային և այլ նշանները վոչնչացնելու համար, Քր. Որ. հոդ. 104-ով.

2. դիտավորյալ կերպով անտառ հրդեհելը. Քր. Որ. հոդ. 104, 206 II և III մաս.

3. ձրիաբար կամ արտոնյալ պայմաններով ստացած փայտեղենը վոչ ըստ նպատակին ոգտագործելու, վերադիջելու, վերավաճառելու, կամ կանգնած վիճակում, կամ նրանից պատրաստված արտադրանքի գնումը, բանվորներին, ծառայողներին փայտեղենով վարձատրելու և աշխատանքները մասնային պայմաններով կատարելու այն դեպքերում, յերբ այդպիսի ոգտագործումը դառնում է վորպես արհեստ, Քր. Որ. հոդ. 123։ Մնացած դեպքերում, ձրիաբար և արտոնյալ պայմաններով ստացած փայտեղենի



վոչ ըստ նպատակին ոգտագործումը կենթարկվի դրամական տուգանքի վոչ ավելի, քան ճիշտ նպատակին չոգտագործված փայտեղենի յեռակի արժեքի չափը, ըստ վորում այդպիսի տուգանքը բռնագանձվում է անվիճելի կարգով, շրջանտառտ. տնտեսության կազմած արձանագրությունների հիման վրա, Քր. Որ. հոդվ. ________.

4. պահեստներից, ինչպես և փայտամթերումների վայրերից պատրաստած փայտանյութի գողացումը, Քր. Որ. հոդ. 193-ով.

յե) պետական և կոոպերատիվ հիմնարկությունների կողմից առանց կոճղավճար վճարելու ստացված փայտեղենի վոչ վորոշված անմիջական նպատակին ոգտագործելու համար, ինչպես նշված է այս § «յե» կետում Քր. Որ. հոդ. 135 և 136.

զ) հանրայնացված սեկտորի պաշտոնատար անձանց անգործունեյությունը, ինչպես և անփույթ վերաբերմունքը դեպի հատատեղերի մաքրումը, Քր. Որ. հոդ. 137։

է) հանրայնացված սեկտորի պաշտոնատար անձանց անտնտեսվարությունը փայտեղենի մշակման վերաբերմամբ, Քր. Որ. հոդ. 154։

§ 3. Անտառորինախախտումներ, վորոնց համար պատասխանատվություն սահմանվում է նորմալ պայմաններով փայտ բաց թողնելու հիմունքներով.—

Այդ կարգի անտառորինախախտումներն են.—

ա) առանց թույլտվություն ստանալու (անտառահատման տոմս, անդորրագիր կամ մի այլ փաստաթուղթ), կամ նրա մեջ նշված ժամկետից դուրս ծառեր կտրելն ու փայտամթերումները.

բ) փայտեղենի ինքնակամ դուրս տանելը, մինչև նրա արժեքի լրիվ վճարումը (վճարովի բաց թողնման դեպքում) կամ մինչև չափելը (ստուգելը).

գ) անտառում ճանապարհներ և քարշուղիներ անցկացնելը, պահեստ, շենքեր և ածխայրոցներ շինելը վոչ այն տեղերում և վոչ այն ձևով, ինչպես այդ թույլատրված է համապատասխան փաստաթղթերով.

դ) վոչ այն տեսակների, վոչ այն չափերի ու հասակության ծառեր կտրելը, կամ նրանց վնասելը, ինչպես այդ թույլատրված է համապատասխան փաստաթղթերով.

յե) համապատասխան փաստաթղթերում նշված քանակությունից ավելի կամ պակաս չափով ծառեր կտրելը.

զ) անտառը հրդեհներից և անտառային վնասատուներից

պաշտպանելու միջոցներ չձեռնարկում, վորպիսիք սահմանված են փայտ բաց թողնելու պայմաններով.

ե) սահմանված անտառկուլտուրական ձեռնարկումներ չկատարելը.

ը) կոճղերը սահմանված բարձրությունից ավելի թողնելը.

թ) մինչև պատրաստած նյութերի արժեքի լրիվ վճարումը կամ ստուգելը, նրանց պարտադիր պահպանությունը.

ժ) հատատեղերից և պահեստներից պատրաստած նյութերն անթույլատրելի կերպով դուրս տանելը.

ի) անտառահատատեղերի և անտառամասերի սյուների փլցնելն ու վնասելը.

լ) հատման վայրերի մաքրման աշխատանքները վոչ սահմանված ժամկետին կատարելը, կամ այդ աշխատանքների անբավարար կատարելը:

Փայտեղենի վոչ լրիվ և անռացիոնալ վերամշակումը:

§ 4. Այս հրահանգի § 6-ի կարգով կազմված արձանագրությունների հիման վրա տուժանքներն ու տուգանքները բռնագանձվում են անվիճելի կերպով:

## II. ԱՆՏԱՌՈՐԻՆԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 5. Այս հրահանգի § 1 և 2 թված յուրաքանչյուր անտառորինախախտումների և հանցագործությունների մասին՝ ինչպես այն դեպքում, յերբ խախտում կատարողը հայտնաբերված ե, նույնպես և այն դեպքում, յերբ նա չի հայտնաբերված, շրջանտառարդյունաբերության վարչությունը, հանձին անտառապահների, տեխնիկների, մասնագետների և անտառային վերոհիշյալ օրգանները գլխավորող անձանց, հանցագործության հայտնաբերումից անմիջապես հետո, պարտավոր են սահմանված ձևով արձանագրություն կազմել (հավելված № 1):

§ 6. Այս հրահանգի § 3 նշված անտառորինախախտումներ յերևան բերելու դեպքում, § 5 նշված անձնավորությունների կողմից արձանագրության փոխարեն ակտ ե կազմվում (ձև № 6), վորի մեջ համառոտ կերպով նկարագրվում ե գործի հանգամանքները և անտառորինախախտումների չափը: Ակտը կազմելուց հետո, այն անմիջապես ուղարկվում ե շրջանտառարդյունաբերությանը:

§ 7. Արձանագրություն կազմելու ժամանակ, յեթե այդ կատարվում ե բնակչություն ունեցող վայրերում, մասնակցում են



գյուղխորհրդի և շրջգործկոմի անդամները, իսկ նրանց բացակայության դեպքում—ընթերականները: Ընթերականներ լինելուց հրաժարվողները յենթարկվում են պատասխանատվության, Քր. Որ. հոդ. 117 II մաս:

§ 8. Անտառորինախախտումների վերաբերյալ ակտեր կազմելիս գյուղխորհրդի, շրջգործկոմի ներկայացուցիչների կամ ընթերականների մասնակցությունն անհրաժեշտ չե: Խոշոր չափերով անտառորինախախտումներ յերևան բերելու դեպքում ակտ կազմելիս կարող ե մասնակցել փայտամթերողը կամ նրա ներկայացուցիչը: Սակայն այդ անձնավորությունների չներկայանալը չի կասեցնում շրջանտառարդյունաբերության վարչության գործողությունը:

§ 9. Անտառորինախախտումների արձանագրության մեջ պիտի նշված լինեն.—

1. անտառորինախախտման տեսակը, 2. արձանագրություն կազմողի պաշտոնը, անունը, հայրանունը և ազգանունը, 3. վորտեղ ե կատարվել անտառորինախախտումը,— շրջանտառարդյունաբերության անունը, պահաշրջանի №-ը, կվարտալի №-ը, անտառամասի սահմանների անունը.

4. ո՞վ ե յերևան բերել անտառորինախախտումը.

5. յե՞րբ ե կատարվել անտառորինախախտումը.

6. յե՞րբ ե յերևան բերվել անտառորինախախտումը.

7. արձանագրություն կազմելու ժամանակը.

8. անտառորինախախտողի ազգանունը, անունը և հայրանունը, հասակը (տարիքը), սոցիալական դրությունը և բնակավայրը.

9. քանի՞երորդ անգամն ե կատարված անտառորինախախտում (այդ տեղեկությունները, անտառորինախախտումների այբբենական ցուցակի հիման վրա, լրացնում ե շրջանտառարդյունաբերությունը).

10. կտրված կամ վնասված ծառի, անտառային և այլ նյութերի տեսակը, չափերը, քանակն ու վորակը, կամ այլ ցուցանիշներ, վորոնք վորոշում են հասցված վնասի չափն ու բնույթը և դրա հետևանքով տեղի ունեցած կորուստը.

11. փայտեղենի կալանքի տակ առնելը, ինչպես նաև գողացման վերաբերյալ նույն տեղեկությունները, ինչ վոր 10-րդ կետում.

12. կատարվա՞ծ ե յեղել խուզարկություն, յերբ և վո՞ր-

տեղ. խուզարկություն կատարելու դեպքում կցել խուզարկության արձանագրությունը (ձև № 5).

13. անտառօրինախախտողի կողմից արձանագրություն կազմելու համար ցույց տրվել է դիմադրություն, ում կողմից հատկապես և ինչումն է այն արտահայտվել.

14. անտառաօրինախախտումը բացահայտողի և այդ գործով մյուս վկաների ցուցմունքները.

15. անտառօրինախախտողի ցուցմունքները.

16. վկաների ազգանունը, անունը և հայրանունն ու բնակավայրը.

17. ցույց տալ արձանագրության կցումները.

18. անտառօրինախախտողի և վկաների ստորագրությունն իրենց ցուցմունքների տակ, արձանագրություն կազմողի և ընթերականների ստորագրությունը՝ արձանագրության վերջում:

§ 10. Անտառօրինախախտումների վերաբերյալ արձանագրությունները կազմվում են հատուկ տպագրած թերթերի (բլանկների) վրա (տես հավելված ձև № 4):

§ 11. Մինչև ստորագրելը, հարցաքննվողներին կարդացվում է նրանց ցուցմունքները: Միաժամանակ անհրաժեշտ է անտառօրինախախտողներից, ներկա յեղողներից ու վկաներից հարցնել, արդյոք նրանցից որևէ մեկը չի՞ ցանկանում կարդացվածի նկատմամբ որևէ դիտողություն անել: Յեթե դիտողություններ արվում են, ապա արձանագրությանը պետք ավելացնել հետևյալը. «արձանագրությունը կարդալու ժամանակ ներկա գտնըվող այս ինչը (անունը և ազգանունը) հայտնեց հետևյալը»: Բոլոր հայտարարություններն արձանագրության մեջ մանրամասն գրելուց հետո, հայտարարություններ անողներից յուրաքանչյուրին նորից պետք ստորագրել տալ:

Արձանագրության մեջ ջնջումներ կատարել չի թույլատրըվում, բայց անհրաժեշտ ուղղումներ կատարելը՝ թույլատրվում է: Դրանք կատարվում են այսպես.—սխալ գրված խոսքերը ջնջվում են, սակայն այսպես, որ ջնջվածը կարելի լինի տեսնել, և նրանց վրա գրվում են ուրիշ խոսքեր, իսկ լրացումները կատարում են վերևից, տողերի մեջ: Արձանագրության վերջում, մինչև նրա ստորագրելը (օրինախախտողի, վկայի և ներկա յեղողի և այլն, ցույց տալ ո՞ր խոսքերն են նոր գրվում կամ ջնջված).



բոլոր ուղղումների և լրացումների մասին պետք վերապահումներ անել: Արձանագրությունը պետք կազմվի անմիջապես և ըստ հնարավորության՝ անտառօրինախախտումը յերևան բերված տեղում:

Արձանագրությունը կազմելու ժամանակ անգրագետների փոխարեն, նրանց բանավոր խնդրով, ստորագրում են նրանք վորոնց այդ անգրագետները վստահում են: Ստորագրողները կամ թե չե արձանագրություն կազմողն այդ առանձին անձնավորությունների անգրագիտության մասին նշումներ է անում:

§ 12. Անգրագետ ընթերականների և վկաների փոխարեն արձանագրություն կազմողի, ինչպես նաև շրջանտառտնտեսության մյուս պաշտոնյաների կողմից ստորագրելը չի թույլատրվում:

Յեթե անտառօրինախախտողը կամ ընթերականներից վորևե մեկը հրաժարվում է արձանագրությունն ստորագրելուց, ապա այդ մասին արձանագրության մեջ պետք նշվի, ցույց տալով ստորագրելուց հրաժարվելու պատճառները:

§ 13. Անասունների կողմից անտառային կուլտուրաները, մատղաշ ծառերը վնասելու, ապօրինաբար անտառային խոտհարքներն արածեցնելու և անտառային բացատներն ինքնագլուխ հերկելու դեպքերում, այդ անտառօրինախախտումների չափն ու պատճառած վնասների աստիճանը վորոշում է գյուղխորհրդի ներկայացուցիչների, և միայն ծայրահեղ դեպքերում՝ կողմնակի քաղաքացիների մասնակցությամբ կազմված հանձնաժողովը:

§ 14. Արձանագրությունը կազմելուց անմիջապես հետո, վոչ ուշ, քան առաջիկա հինգ որվա ընթացքում, այն պետք ներկայացվի շրջանի ավագ անտառապահին (տեխնիկին), ստորագրել տալով արձանագրության տեղում:

§ 15. Ավագ անտառապահը (տեխնիկը) արձանագրությունն ստանալով, պարտավոր է մի որվա ընթացքում, այն բավականաչափ լրիվ և կանոնավոր ձևակերպված լինելու տեսակետից ստուգել և ստուգված լինելու մասին իր վիզան անելով, անմիջապես ուղարկել շրջանտառտնտեսությանը:

§ 16. Ավագ անտառապահի (տեխնիկի) տված յեզրակացությամբ, յեթե արձանագրության վերաբերյալ անհրաժեշտ են լրացուցիչ տեղեկություններ, ապա արձանագրությունը վերա-

դարձվում է կազմողին՝ քննություն կատարելու համար, կամ թե չէ, նայած գործի հանգամանքներին, ավագ անտառապահը (տեխնիկը) անձամբ ինքն է կատարում պահանջվող քննությունը։

§ 17. Քննության արձանագրությունն անմիջապես պետք է ներկայացվի ավագ անտառապահին (տեխնիկին), իսկ վերջինս իր նյութերի հետ միասին այն ուղարկում է շրջանտառարդտնտեսությանը։

§ 18. Շրջանտառարդտնտեսությունն ստանալով արձանագրությունը նրան վերաբերյալ բոլոր նյութերով, անմիջապես ստուգում է այն լրիվ ու ձևակերպված լինելու տեսակետից, ինչպես նաև գործող տուգանային սակացուցակով գնահատում է կտրված կամ փչացրած փայտեղենի կամ այլ անտառանյութերի արժեքը և վորոշում է անտառօրինախախտողի կողմից պետությանը պատճառած նյութական վնասի չափը։

§ 19. Շրջանտառարդտնտեսությունն անտառախախտումների արձանագրության վրա (ձև № 1) նշանակում է նրա ստացման թվականը և անտառօրինախախտումների մատյանով վորոշում է, թե տվյալ անձնավորությունը քանի՞երորդ անգամն է անտառօրինախախտումների համար պատասխանատվության յենթարկվում, և արձանագրության վրա նշանակում է այդ թիվը, ինչպես նաև թվականն ու արձանագրությունների №№-ը։

§ 20. Բավականաչափ լրիվ ու ձևակերպված համարված արձանագրությունն ստանալու պահից յերկու օրվա ընթացքում, պետք է ուղարկել ժողդատարան։ Անտառախախտումների գրքում արձանագրությանը տված ընթացքի մասին նշումներ են արվում և նշանակվում է արձանագրության ուղարկվելու թվականը։

§ 21. Անտառային կուլտուրաներին և դալար ծառերին հասցրված վնասների գնահատումը վորոշվում է, յելակետ ունենալով արհեստականորեն անտառի վերականգնման վրա կատարված միջին ծախսը, վորպիսին հաշվվում է նախընթաց տարվա կատարողական գնահատումների հիման վրա,—ավելացնելով դրան տվյալ հասակում ծառատունկերի աճման կրկնակի արժեքը։

§ 22. Խոտհարքների ապօրինաբար արածեցման և ինքնակամ հերկումների վնասների արժեքը վորոշվում է տվյալ վայրի շուկայական գների հիման վրա, համաձայն համապատասխան շրջգործկոմի տված տեղեկանքի, հաշվի առնելով նաև համապատասխան հողատեսքի վորակը՝ նրանց արդյունավետությունը սահմանել կատեգորիաներով։



§ 23. Արձանագրությունը լրիվ կամ պարզ չլինելու դեպքում, շրջանտառարդտնտեսությունը գլխավորող անձնավորության կարգադրությամբ, միջոցներ են ձեռք առնվում յերկրորդ անգամ քննություն կատարելու միջոցով լրացնելու արձանագրության բովանդակությունը, վորը հանձնարարվում է կամ արձանագրություն կազմողին, կամ շրջանտառարդտնտեսության աշխատակիցներից մեկին։

§ 24. Անտառահատումը հայտաբերելուց հետո, շրջանտառարդտնտեսության վարչատնտեսական պերսոնալը՝ տվյալ պահաշրջանն առաջին իսկ այցելության ժամանակ, քննում է հատման տեղերը, իսկ կոճղերը կնքում է տուգանքի դրոշմով։ Կնքող անձնավորությունն իր մոտ գտնվող «անտառապահի գրքույկում» այդ առթիվ համապատասխան նշումն է անում։

§ 25. Ըստ արձանագրության, ինքնակամ հատումներից մնացած կոճղերը տուգանքի դրոշմով պետք է կնքվեն արձանագրությունը կազմելուց հետո՝ 6 ամսից վոչ ուշ։ Կոճղերը կնքում են կտրված տեղում և կողքից՝ տաշված տեղում։ Վորովհետև չկնքված կոճղերը կարող են կասկածների տեղիք տալ,—արդյոք անտառապահը ի չարը գործ չի դնում,— ուստի նա ինքը պետք է հոգ տանի, վոր կոճղերը կնքվեն, պահանջելով այդ մասին յուրաքանչյուր դեպքում, պահանջելով նաև, վոր այդ մասին նշումներ արվեն անտառօրինախախտումների մատյանում։

§ 26. Մի քանի անձնավորությունների կողմից անտառօրինախախտումներ կատարվելու դեպքում, թույլատրվում է բոլոր անտառօրինախախտողների համար միանգամից կազմել մի արձանագրություն։

§ 27. Ճանապարհին պատահած ջարդվածքները վերանորոգելու համար, անցորդների կողմից կատարված փոքր անտառահատումները չեն հետապնդվում։

§ 28. Շրջանտառարդտնտեսությունն անտառօրինախախտման մասին արձանագրությունն ստանալուն պես (արձանագրություն № 6), վորոշում է անտառօրինախախտումից անտառային տնտեսությանը հասած վնասի չափը։

Անտառօրինախախտողի կողմից հասցրած խոշոր վնասի դեպքում, պայմանագրի համաձայն, համապատասխան փայտամթերողից կամ նրա լիազորից, անվիճելի կարգով պահանջվում է

մուծելու տուգանքը։ Փոքր անտառօրինախախտումները, վորոնք մուծված են արձանագրությունների մեջ, կցվում են համապատասխան պայմանագրին այն հաշվով, վորպեսզի պայմանագրի գործողության ժամկետը լրանալիս, բոլոր արձանագրությունների տուգանքների համար միասնական պահանջ ներկայացվի։

§ 29. Անտառօրինախախտումների վերաբերյալ, յերբ այն յերևան բերելու դեպքում և արձանագրություն կազմելու ժամանակ, ինչպես նաև այս հրահանգի § 22-ում նշված դեպքերում, յերբ անտառօրինախախտողը չի հայտաբերվում, շրջանտառարդյունտեսության վարչությունը, կամ սրա պետի հանձնարարությամբ՝ քննությունը կատարում է միլիցիան (ձև № )։

§ 30. Անտառախախտումների վերաբերյալ քննություններ կատարող պաշտոնատար անձինք իրավունք չունեն մերժելու, վորպես օրինախախտողներ պատասխանատվության յենթարկվող անձանց միջնորդությունը՝ կանչելու և հարցաքննելու վկաների, կամ հավաքելու այլ ապացույցներ, յեթե այդ հանգամանքները, վորոնց հաստատելու մասին միջնորդում է պատասխանատվության յենթարկվողը, գործի համար կարող են նշանակություն ունենալ։ Այդ միջնորդությունների մերժման դեպքում, քննության արձանագրության մեջ պիտի նշվեն մերժման շարժառիթները։

§ 31. Քննության ժամանակ վկաներին հարցաքննում են շրջանտառարդյունտեսության գրասենյակում, գյուղխորհրդի շենքում, կամ կոլտնտեսության վարչության մեջ, վորտեղ վկաները կանչվում են շրջանտառարդյունտեսության ծանուցագրով՝ գյուղխորհրդի կամ գյուղական կատարածուների միջոցով, կամ մի այլ պարզ կարգով։

§ 32. Վկաները հարցաքննվում են առանձին-առանձին և մյուս վկաների բացակայությամբ։ Քննություն կատարողը, վկային հարցաքննելուց առաջ, պարտավոր է հավաստիանալ ինքնությանը, վորոշել նրա հարաբերությունը օրինախախտողի հետ և նախազգուշացնել՝ վկայություն տալուց հրաժարվելու (Քր.Որ. հոդ. 117 I մասով) և սուտ ցուցմունք տալու (Քր. Որ. հոդ. 119 I մասով) համար՝ պատասխանատվության յենթարկվելու մասին։ Արձանագրության մեջ վկաների ցուցմունքները գրվում են առաջին դեմքով և, ըստ հնարավորին, բառացի։

Վկաներին կարող են հարցաքննել բացառապես փաստերի մասին, վորոնք անհրաժեշտ են տվյալ գործի համար, և մեղադրը-



յալի անձնավորության բնութագրման մասին։ Խուլի, համրի կամ հարցաքննություն կատարողի համար անհասկանալի լեզվով խոսող վկայի հարցաքննության ժամանակ հրավիրվում է թարգման կամ մեկը, վոր հասկանում է խուլի կամ համրի նշանները, ըստ վորում այդ անձնավորությունների մասնակցությունը հարցաքննությանը նշվում է արձանագրության մեջ, վորը և այդ անձնավորությունները ստորագրում են։ Քննություն կատարող մարմինների կողմից դատակոչով կանչված թարգմանիչները՝ ներկայանալուց խուսափելու, կամ իրենց պարտականությունները կատարելուց հրաժարվելու դեպքում, յենթարկվում են պատասխանատվության Քր. Որ. 117 II մ. հոդվածով, իսկ քննության ժամանակ դիտավորյալ կերպով սուտ վկայություն տալու համար՝ Քր. Որ 119 I մ. հոդվ.։

Հարցաքննությունը վերջանալուց հետո վկան ստորագրում է արձանագրությունը, և իրավունք ունի, համաձայն իր տված ցուցմունքների, պահանջել լրացնելու արձանագրությունը և նրա մեջ փոփոխություններ մտցնելու։

Յեթե վկան ցանկանում է, ապա իրավունք ունի անձամբ գրելու իր ցուցմունքները։

§ 33. Այն դեպքերում, յերբ բավականաչափ հիմքեր կան կասկածելու, վոր վորևէ շենքում կամ վորևէ անձնավորության մոտ գտնվում են գողացված անտառանյութեր կամ այլ իրեր, վորոնք գործի համար կարող են նշանակություն ունենալ,—ապա անտառօրինախախտման մասին արձանագրություն կազմող կամ քննություն կատարող անձը պահանջում է տալ այդ իրերը և գրավում է, իսկ չտալու դեպքում՝ վերցնում է հարկադրական կարգով կամ կատարում է խուզարկություն, իր այդպիսի գործողության—խուզարկության—համար կազմելով առանձին արձանագրություն։ (Հավելված ձև № 5)։

§ 34. Խուզարկությունները ու գրավումները, բացի անհետաձգելի դեպքերից, կատարվում են ցերեկը։ Խուզարկությունները ու գրավումները կատարվում են վկաների և տվյալ շենքը զբաղեցնող անձնավորության, կամ նրա ընտանիքի անդամների կամ հարևանների ներկայությամբ։ Ընթեր վկաներ ներգրավելու դժվարության դեպքում, վերջիններս կարող են փոխարինվել տեղական իշխանության ներկայացուցիչներով։ Ընթերակա լինելուց հրաժարվելու համար, հրաժարվողը յենթարկվում է պատասխանատվության Քր. Որ-ի 117 II մ. հոդվ.։

Խուզարկության ժամանակ կարող են բացվել փակված շենքերն ու պահեստները, ըստ հնարավորին փականները չփչացնելով: Խուզարկության հետևանքով, տվյալ գործին վերաբերող յերևան բերված և վերցրած իրերի մասին, վերոհիշյալ իրերի ցուցակագրումով, կազմվում է առանձին արձանագրություն: Կատարված խուզարկության կամ գրավման վերաբերյալ յեղած ամեն տեսակի հայտարարություններն ու բողոքները պիտի մուծվեն արձանագրության մեջ, վորի պատճենը տրվում է խուզարկվող անձնավորության կամ նրա ընտանիքի անդամներին:

§ 35. Շրջգործկոմների պարտադիր վորոշումների կարգով հետապնդվող անտառօրինախախտումների գործերի վերաբերյալ կատարվող քննությունները չեն կարող յերկու դեկադից ավելի տևել, իսկ դատական կարգով (разрешаемым) քննվող գործերը—մեկ ամսից ավելի:

§ 36. § 2, ա. բ. գ. դ. յե. զ. է. կետերով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ կազմած արձանագրությունները—քննելու համար—ամբողջապես ուղարկվում է այն ժողովրդական քննիչին, վորի շրջանում գտնվում է շրջանտառտնտեսությունը:

Սակայն, յեթե նշված գործերի վերաբերյալ պիտի քննություն սկսվի, ապա քննություն սկսող մարմինն այդ մասին անմիջապես հայտնում է քննիչին, միևնույն ժամանակ նա չի դադարեցնում այն գործողությունները, վորոնք հետագա քննության ապահովելու համար անհրաժեշտ են: Անհրաժեշտ գործողություններն ավարտելուց հետո, նա չսպասելով քննիչի կարգադրության և մի ամսյա ժամկետի լրանալուն,—գործը հանձնում է քննիչին: Գործը քննիչին հանձնելուց հետո, քննության վերաբերյալ հետագա վորևե գործողություն կարող է կատարվել միայն քննիչի հատուկ կարգադրությամբ:

§ 37. § 2 «յե» և «ը» նախատեսված հանցագործությունների մասին կազմած արձանագրություններն անմիջապես ուղարկվում է միլիցիային՝ քննություն կատարելու համար:

§ 38. Այս հրահանգի §§ 1 և 2 նշված գործերը՝ հանցագործության նշանակների բացակայության կամ մեղավորների յերևան չբերելու դեպքում, կամ մեղավորի մահվան դեպքում, կամ վաղեմությունն անցնելու կամ ամնիստիայի դեպքում՝ գործի վարույթը կարճվում է շրջանտառտնտեսությունը գլխավորող անձնավորության կարգադրությամբ:



§ 39. Այս հրահանգի §§ 1 և 2 նշված գործերը, մեղավորներին դատի տալու համար, բավականաչափ տվյալների առկայության դեպքում, քննությունն ավարտելուց հետո, համապատասխան յեզրակացությամբ, քննիչին ուղարկվում է այն դեպքերում, յերբ կատարած հանցագործության համար Քր. Օր. նախատեսվում է ազատազրկում: Մնացած դեպքերում՝ անմիջաբար ուղարկվում է ժողդատարան:

§ 40. Յուրաքանչյուր առանձին գործի քննության հսկողությունը պատկանում է այն ժողովրդական քննիչին, վորի շրջանում գտնվում է շրջանտառտնտեսությունը: Քննիչն իրավունք ունի ցանկացած ժամանակ ծանոթանալ բոլոր նյութերի հետ, և քննություն կատարող մարմիններին ցանկացած գործի վերաբերմամբ ցուցումներ տալ և նրանց առաջարկել կատարելու այս կամ այն գործողությունը:

Քննություն կատարող մարմինների գործողությունների վերաբերմամբ գանգատ տրվում է ժողովրդական քննիչին և վճիռը կայացնում է այս վերջինս:

Քննություն կատարող մարմինների ընդհանուր հսկողությունը պատկանում է դատախազին:

§ 41. Անտառօրինախախտողների դեմ, վորոնք իրենց գործողությամբ անտառային տնտեսությանը վնաս են պատճառել, վարչական հետապնդում հարուցելու դեպքում—քաղաքացիական հայց չի հարուցվում: Այդպիսի դեպքերում, տուժանք դնող հիմնարկությունը (գյուղխորհուրդ, շրջգործկոմ) ուղարկում է անտառօրինախախտման մասին արձանագրությունը, նրա մեջ նշելով ինչպես ամբողջ կտրված կամ վնասված ծառի, նույնպես և նրա գողացված մասի արժեքը:

Քրեական հետապնդում հարուցելու դեպքում, տնտեսությունն իր գործողություններով վնաս հասցնող անտառօրինախախտողներին առաջադրվում է քաղաքացիական հայց:

Ծանոթություն.—1) Վարչական հետապնդում հարուցվում է, յեթե անտառօրինախախտումը հետևանք է անտառները գողությունից և կոտրատելուց պաշտպանելու համար սահմանված օրենքների ու կանոնների վոչ չարամիտ խախտման և յեթե անտառային տնտեսությանը պատճառած վնասը 50 ռ. չի անցնում:

2). Այն դեպքում, յերբ անտառօրինախախտման վերաբերյալ գործը հետապնդվում է պարտադիր վորոշման կարգով, ապա այն չի կարող հարուցվել, կամ յենթակա յե կարճման, նկատի ունենալով վարչական հետապնդման վաղեմության ժամկետի անցնելը

Դատական կարգով անտառօրինախախտողին կարելի յե հայց ներկայացնել՝ անտառային տնտեսության նրա կողմից հասցրած վնասի համար, յեթե այդ վնասը 10 ռ. ավելի յե։

§ 42. Անտառօրինախախտումների դեպքում քաղաքացիական հայցը կազմվում ե հետևյալ գումարներից, վորը դատարանի միջոցով գանձվում ե անտառօրինախախտողից։

1. Ինքնակամ հատումների, գողացված կամ վոչնչացրած ծառի կամ այլ նյութերի ու շինվածքների արժեքից, յեթե վերջիններս անտառօրինախախտողների մոտ չեն հայտաբերված ու վերցված։

2. Այն գումարներից, վորպիսիք պահանջվում են փոխհատուցելու այն վնասները, վոր անտառօրինախախտողը պատճառել ե պետական անտառային տնտեսությանը, այսինքն՝

ա) անտառօրինախախտման հետևանքների տեխնիքական լիկվիդացիայի արժեքից (առաջացած բացատները մշակելու, վերականգնելու վնասված կուլտուրաները, տաշեղների, ճյուղերի հավաքելը, փչացրած ցանկապատերն ուղղելը և այլն).

բ) անտառօրինախախտմամբ արժեքազուրկ արված տունկերի կամ փայտեղենի վոչ տնտեսաբար կատարված հատման վնասներից.

գ) կալանքի տակ առնված փայտի, կամ այլ նյութերի կամ շինվածքների պահպանման արժեքից, և

դ) անտառօրինախախտմամբ անտառային տնտեսությանը պատճառած այլ տեսակի վնասների արժեքից։

§ 43. Անտառօրինախախտումների վերաբերմամբ քաղաքացիական հայց ներկայացվում ե քրեական հետապնդում հարուցելու հետ միաժամանակ, և քննության յենթակա յե նրա հետ միասին։ Յեթե վորևե պատճառով քաղաքացիական հայցը չի ներկայացված դատարան քրեական գործը հարուցելու հետ միաժամանակ, ապա այն կարելի յե ներկայացնել մինչև քրեական գործի քննությունը կամ առանձին քաղաքացիական հայցի կարգով։

§ 44. Անտառային մարմինները, անտառօրինախախտման ապացուցումն ապահովելու համար, ապօրինի ձեռք բերածի, ինչպես նաև ներկայացրած քաղաքացիական հայցի արժեքը վճարելու և փոխհատուցող անվիճելի կարգով հասնող դրամական գումարների վճարումների համար,—հայտաբերած ապօրինի կերպով մթերած անտառանյութերի, փայտե շինվածքների և այլ առարկաների վրա կալանք են դնում։

11-27445



§ 45. Կալանքի տակ առնված անտառանյութերը, փայտե շինվածքները և այլ առարկաները, մինչև նրանց իրացումը պահպանության ե տրվում.—

ա) անտառօրինախախտողին, յեթե դրանք հայտաբերվում են նրա մոտ,

բ) յերրորդ անձնավորությունների, ըստ անտառանյութերի հայտաբերման վայրի,

գ) տվյալ անտառապահին, յեթե նյութերը հայտաբերված են շրջանտառտնտեսության տերիտորիայում։

§ 46. Կալանքի տակ առնված ապօրինի պատրաստած բոլոր փայտանյութերը, փայտե շինվածքներն ու առարկաները շրջանտառտնտեսությունը պիտի անմիջապես իրացնի։

Կալանքի տակ առնված անտառանյութերը, փայտե շինվածքներն ու մյուս առարկաները շրջանտառտնտեսության մեջ պիտի հաշվառման յենթարկվեն։

§ 47. Շրջանտառտնտեսությունը գլխավորող անձնավորությունը վարչական և դատական կարգով պաշտպանում ե անտառօրինախախտումների հետապնդումներ հարուցելը։ Մեղադրանք հարուցելը և քաղաքացիական հայցը պաշտպանելը կարելի յե հանձնարարել մասնագետներին և աշխատակիցներին՝ այդ մասին նրանց գրավոր լիազորություններ տալով։

§ 48. Քր. Օր. 110 հոդ. անտառօրինախախտումների գործերը՝ նրանց ստացվելու օրից յերկու դեկադից վոչ ուշ, քննվում են այն ժողովրդական դատարաններում, վորտեղ կատարված ե անտառօրինախախտումը, ըստ վորում շրջանտառտնտեսությանը նախորոք հայտնվում ե գործը դատարանում լսվելու օրվա մասին։

§ 49. Անտառային պահակին, վորպես վկայի և անտառային վարչակազմին, վորպես շրջանտառտնտեսության ներկայացուցչի—դատարանում ներկա գտնվելու հնարավորություն տալու նպատակով, անտառօրինախախտման վերաբերյալ գործերը պիտի նշանակել խմբերով՝ մի օր։

Անտառային վարչակազմի և պահակի բնակավայրերը դատարանից հեռու գտնվելու դեպքում, դատարանը գործի քննությունը նշանակում ե նշված անձնավորությունների բնակավայրերին մոտիկ կետում։

ԳՐԱԴԱՐԱՆ

§ 50. Անտառօրինախախտումների գործերի վերաբերյալ վճիռների պատճենները պատշաճ շրջանտառտնտեսությանն ուղարկվում ե 5-օրյա ժամկետում։

Արդարացնող վճիռների, ինչպես նաև անբավարար հայցային պահանջների դեպքում, շրջանտառարդտնտեսությունը գլխավորող անձնավորությունը, վճռաբեկության առիթների առկայության դեպքում, պարտավոր ե որենքով սահմանած ժամկետում, նույն այդ դատարանի միջոցով վճռաբեկ գանգատ տալ։

§ 51. Դատարանի վճիռն ու վորոշումն որինական ուժի մեջ մտնելու դեպքում, դատարանը կատարողական թերթն անմիջապես ուղարկում ե համապատասխան շրջանտառարդտնտեսությանը։

§ 52. Շրջանտառարդտնտեսությունը կատարողական թերթն ստանալով, այն անմիջապես գրանցում ե անտառորինախախտումների մատյանում, վորտեղ նշանակվում ե նրա №-ը, ստացվելու թվականը, վորից հետո կատարողական թերթը 2 որվա ընթացքում պիտի ուղարկվի դատական կատարածուին՝ վորոշմամբ վճռված գումարը բռնագանձելու համար։

§ 53. Կատարողական թերթով իր ժամանակին դրամների բռնագանձման պատասխանատվությունը դրվում ե դատական մարմինների և շրջանտառարդտնտեսությունը գլխավորող անձնավորության վրա։ Կատարողական թերթով դրամ բռնագանձելու ժամկետը, դատական կատարածուին հանձնելու պահից, յերկու դեկադից ավելի չպիտի լինի։

§ 54. Դատական կատարածուները բռնագանձած գումարն անմիջապես մուծում են շրջֆինբաժինը և դրամը մուծելու մասին անդորրագիրը յերկու որվա ընթացքում ներկայացնում են համապատասխան շրջանտառարդտնտեսությանը։ Վերջինս բռնագանձված գումարն անց ե կացնում անտառորինախախտումների մատյանում, իսկ անդորրագիրը կցում ե հաշվետվությանը։

§ 55. Այն դեպքում, յերբ դատական կատարածուն կատարողական թերթով բռնագանձած գումարն ուշացնում ե կամ բռնագանձված դրամն իր ժամանակին շրջֆինբաժինը չի մուծում, ապա շրջանտառարդտնտեսությունը գլխավորող անձնավորությունն իրավունք ե վերապահվում ստուգում կատարելու և այդ գործում անփութություն ցուցաբերող մեղավորներին պատասխանատվության յենթարկելու։

Անտառժողկոմատի Հ. Ս. Խ. Հ. լիազոր՝ Գ. ԱԹԱԲԵԿՅԱՆ

Հ. Ս. Խ. Հ. Արդարադատության Ժողովրդական
Կոմիսար՝ Պ. ԹՈՐՈՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ ՀՐԱՀԱՆԳԻ § 10-ի

(Առաջին եջ)

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1

## ՀՍԽՀ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՈՐԵՆՍԳՐՔԻ ԱՆՏԱՌՈՐԻՆԱԽԱԽՏՄԱՆ ՄԱՍԻՆ

193 թ.________________ամսի________________ին

Այս արձանագրությունը կազմեց________________ անտառարդտնտեսութ. կրտսեր անտառապահ (անուն, հայրանուն, ազգանուն) ________ ____ ռուբլու անտառորինախախտման մասին, ստորև ստորագրող անձնավորությունների ներկայությամբ և պահաշրջան №________ ում հայտաբերվեց հետևյալ որինախախտումը.—

| Յերբ և հայտաբերված անտառորինախախտումը | Ինքնակամ հատված կամ ճզմված | | | | Այլ անտառորինախախտումներ և նրանց չափը | Արժեքը | | Գրաված փայտը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Շինարարական փայտ | | | Անտառափայտ | | | | | |
| | Տեսակը | Ծառերի թիվը | Հաստությունը | Տեսակը և ծավալը | | | Տուգանք | Տեսակը, քանակը և չափը | Ո՞ւմ է տրված պահ, վորտեղ է գտնվում այն |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |

| Կամավոր մուծումներից ստացված գումարը | Գրաված փայտի վաճառքից ստացված գումարը | Ընդամենը | Յերբ և վոր ֆին-բաժնին է հանձնված դրամը, անդորրագրի №-ը | Ժողդատարանի կողմից դրված տույժը | Յերբ և ում է հանձնված բռնագանձել դրամը | Յերբ է հանձնված շրջանտառարդտնտեսությանը | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 7, 8, 11, 17 սյունակները լրացվում են շրջանտառարդտնտեսության մեջ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | |

(յերկրորդ էջ)

## ԱՆՏԱՌՈՐԻՆԱԽԱԽՏՈՂԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՊԱՐԶՎԵՑ

1. Ազգանուն, անուն, հայրանուն, հասակը ______
2. Անտառորինախախտողի բնակավայրը ______
3. Արհեստը կամ զբաղմունքը ______
4. Սոցիալական դրությունը ______
5. Ընտանեկան դրությունը ______
6. Կրթությունը ______
7. Կուսակցական պատկանելիությունը ______
8. Քանի յերորդ անգամն է կատարված որինախախտումը ______
9. Անտառորինախախտողի ցուցմունքները ______

Ստորագրություն

10. Անտառորինախախտումը յերևան բերողի ցուցմունքը՝ իրային ապացույցների համաձայն ______
11. Վկայի անունը, ազգանունը, հասցեն և բնակավայրը ______
12. Գյուղխորհրդի ներկայացուցչի ցուցմունքը (ստորագրություն) և ընթերականեր ______

______ ցուցմունքները (ստորագրություն)։

ՍՏՈՐԱԳՐՈՂՆԵՐ 1) Անտառորինախախտող
2) Վ կ ա
3) Գյուղխորհրդի ներկայացուցիչ
4) Ընթերականեր
5) Արձանագրություն կազմող

ՀԱՎԵԼՎԱԾ ՁԵՎ № 2
ՀՐԱՀԱՆԳԻ § ______ Հ.

______ Շրջանտառարդյունաբերության № ______ շրջանի ավագ անտառապետին

№ ______ Պահաշրջանի կրտսեր անտառապահից

193 թ. ______ ամսի ______ ին

### Զ Ե Կ Ո Ւ Յ Ց

Սույն թվին ինձ հանձնված պահաշրջան № № ______ շրջելիս յերևան է հանված ______



վորի մասին և հայտնում եմ Ձեզ։

«______» Պահաշրջանի անտառապետ

(Ստորագրություն)

ՀԱՎԵԼՎԱԾ ՁԵՎ № 3
Հրահանգի § ______ հ.

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

193 թ. ______ ամսի ______ ին

Յես ______ շրջանտառարդյունաբերության պահաշրջանի կամ շրջանի (կրտսեր անտառապահ կամ ավագ անտառապահ, անուն-ազգանուն), սույն թվին Քր. Որ. 110 հոդ. հիման վրա սորև հիշվածին հարցաքննեցի վորպես մեղադրյալ Քր. Որ. 110 հոդ. նախատեսված հանցագործության վերաբերյալ և նա հայտնեց.—

Ազգանուն, անուն, հայրանուն, ______
Հասակը ______
Ծագումը ______
Սոցիալական դրությունը ______
Զբաղմունքը տվյալ ժամանակում ______
Ստացվածքային դրությունը ______
Ընտանեկան դրությունը ______
Կրթությունը ______
Կուսակցական պատկանելիությունը ______
Վ՞որ միության անդամ է ______
Զինվորական ծառայությունը ______
Քրեական պատասխանատվությունը ______
Սխալ ցուցմունք տալու համար Քր. Որ. 119 հոդ. պատասխանատվության յենթարկվելու մասին հայտարարված է։

Գործի վերաբերյալ տված ցուցմունքը ______

Ստորագրություն՝ ______
Հարցաքննեց՝ ______

Ձեվ № 4
ՀԱՎԵԼՎԱԾ ՀՐԱՀԱՆԳԻ § 30-Ի

## ՎԿԱՆԵՐԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

193 թ. ____ ամսի ____ ին

Ես (կրտսեր անտառապահ, ավագ անտառապահ) շրջանտառարդյունտեսության ____ շրջանի ____ պահաշրջանի.
____ (անուն, ազգանուն) ____
Համաձայն Քր. Որ. 110 հոդվածի ներքոհիշյալին հարցաքննեցի ____ գործով և նա տվեց հետևյալ ցուցմունքը
Ազգանուն, անուն, հայրանուն ____
Հասակը ____
Ծագումը ____
Ընտանեկան դրությունը ____
Կրթությունը ____
Պաշտոնը ____
Կուսակցական պատկանելիությունը ____
Իսկական բնակավայրը ____
Կապը կասկածելիի կամ տուժողի հետ.—ազգակցություն, բարեկամություն և այլն ____

Սուտ ցուցմունք տալու համար նախազգուշացված է Քր. Որ. 119 հոդվածով։

Գործի վերաբերմամբ տված ցուցմունքը ____

Ստորագրություն՝ ____

Հարցաքննեց՝ ____



Ձեվ № 5
ՀԱՎԵԼՎԱԾ ՀՐԱՀԱՆԳԻ § 32-Ի

## ԽՈՒԶԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԱՆՏԱՌՕՐԻՆԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ

Համաձայն Անտառժողկոմատի Խ. Հայաստանի լիազորության և ՀՍԽՀ Արդժողկոմատի՝ «ՀՍԽՀ Պետական անտառային ֆոնդի անտառներում անտառօրինախախտումները հետապնդելու կարգի մասին» հրահանգի, յես ներքո ստորագրյալս ____ շրջանտառարդյունտեսության (արձանագրություն կազմողի պաշտոնը, ազգանուն, անուն, հայրանուն) ____ շրջանի կամ պահաշրջանի ____ 193 թ. ____ ամսի ____ ին, հետևյալ ընթերակաների ներկայությամբ, խուզարկություն կատարեցի ____ գյուղխորհրդի (ազգանուն, անուն, հայրանուն), քաղաքացի ____ (ազգանուն, անուն, հայրանուն,) ըստ վորում յերևան բերեցի հետևյալները.—

Վո՞րտեղ է կատարված խուզարկությունը (տանը, պահեստում, բակում և այլն) ____

Վո՞րտեղ է յերևան հանված գողացված անտառանյութը (ցույց տալ ճիշտ տեղը) ____

Ի՞նչ է յերևան բերված խուզարկության ժամանակ (ցույց տալ քանակը, չափը) ____

Արդյոք յերևան բերվածը թաքցված յեղել է, թե բաց ընկած, (ցույց տալ թե ինչպես է թաքցված յեղել,—չարդախում ծղոտի տակ, թե գետնում թաղած և այլն) ____

Այն անձնավորության ցուցմունքը, վորի մոտ կատարվել է խուզարկությունը. գրել հարցաքննվողի խոսքերով։

ա) Ընդունում եք, վոր խուզարկության ժամանակ ձեզ մոտ գտնված անտառանյութը դուք գողացել եք, ինչ նպատակով եք գողացել այդ անտառանյութը։ ____

բ) Յեթե չեք ընդունում, վոր ձեզ մոտ յերևան բերված անտառանյութը գողացված է, ապա վորտեղից և յերբ եք դուք այն ստացել, և դրա համար ինչ ապացույցներ ունեք դուք:

___

գ) Խուզարկության վերաբերմամբ ինչ բողոքներ և հայտարարություններ ունեք անելու: ___

___

Հարցաքննվողի ստորագրությունը՝ ___

Խուզարկության ժամանակ յեղել ե՞ արդյոք ընդդիմադրություն, ում կողմից և ինչով է այն արտահայտվել ___

___

Ու՞մ է պահ տրված խուզարկության ժամանակ յերևան բերված անտառանյութը ___

___

Յերևան բերված անտառանյութը պահելու համար ընդունողի ստորագրությունը ___

___

Ընթերականների ստորագրությունը՝ ___

___

Խուզարկությանը ներկա գտնվող պաշտոնատար անձանց պաշտոնն ու ստորագրությունները ___

___

Խուզարկություն կատարողի ստորագրությունը՝ ___

Ձև № 6
ՀԱՎԵԼՎԱԾ ՀՐԱՀԱՆԳԻ § 6-ի

(Անտառարդտնտեսության
___
___ անունը)

## ԱԿՏ № ___

1. Անտառորինախախտման տեսակը ___
2. Ո՞վ է կազմել ակտը ___
3. Անտառորինախախտման կատարված տեղը ___
4. Ո՞վ է յերևան բերել անտառորինախախտումը ___
5. Յե՞րբ է կատարվել անտառորինախախտումը ___
6. Յե՞րբ է յերևան բերված անտառորինախախտումը ___
7. Ակտը կազմելու ժամանակը ___



8. Կազմակերպության անունը ___
9. Անտառամթերումների պատասխանատու անձնավորության ազգանունը, անունը, հայրանունը ___
10. ա) Կտրված է կամ փչացված է ___
(տեսակը, չափը, քանակը, մասսան, գնահատումը)
բ) Կտրված փայտից կալանքի տակ է առնված,
(տեսակը, քանակը, կալանքի տակ առնվածի և գողացվածի արժեքը, ում է պահ տրված կալանքի տակ առնված անտառանյութը):
11. Այլ անտառախախտումներ
(չափը և արժեքը)
12. Անտառորինախախտողի կողմից պատճառած վնասի ամբողջ գումարն այս ակտով ___ ռուբ. ___ կոպ.

Ակտ կազմողի ստորագրությունը՝ ___

Սույն հրահանգը հաստատված է ԽՍՀՄ Անտառժողկոմատի յեվ ԽՍՀՄ Ֆինժողկոմատի կողմից 1932 թ. դեկտեմբերի 21-ին

# ՀՐԱՀԱՆԳ

## ԲԱՆՎՈՐԱԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԶԻՆՎՈՐՆԵՐԻՆ ՈՒ ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻՆ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՀՍԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՏԱՌՆԵՐԻՑ ՓԱՅՏԵՂԵՆ ԲԱՑ ԹՈՂՆԵԼՈՒ ՅԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՂՄՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՑ ՈԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

### ՀԱՏՎԱԾ I.

### ՓԱՅՏԵՂԵՆ ԲԱՑ ԹՈՂՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Սույն հրահանգի 2—6 կետերում նշված կանգուն վիճակում փայտեղեն, ինչպես նաև անտառանյութեր բաց թողնելու դեպքում արտոնություններ տրվում են.—

ա) Այն կոլտնտեսականների և մենատնտեսների ընտանիքներին, վորոնց կազմի մեջ մտնում են.—

1. Կադրային, շարային և հրամանատարական կազմի զինվորականներ։

2. Բանվորագյուղացիական Կարմիր բանակի պահեստի հրամանատարական կազմի զինվորականներ։

բ) Միլիցիայի ոպերատիվ-շարային և վարչատնտեսական կազմի աշխատակիցներին և ռազմականացված պահպանության (այդ թվում նաև ռազմականացված հրշեջ պահպանության).

գ) Հաշմանդամության I, II, և III խմբերին պատկանող պատերազմի հաշմանդամներին.

դ) ԽՍՀՄ և դաշնակից հանրապետությունների կողմից մի, կամ մի քանի շքանշաններով կամ հեղափոխական պատվո զենքով պարգևատրված անձինք.

յե) Զքավոր անհատական տնտեսություններին և կոլտնտեսականների ընտանիքներին, վորոնց կազմում կա նախկին կարմիր բանակային և կարմիր պարտիզան։



2) Շրջանտառարդտնտեսությունից և անտառտնտեսություններից, սույն հրահանգի 1-ին կետում հիշատակվածներին կանգուն վիճակում փայտեղեն, շինությունների, վառելիքի և տնային կարիքների համար պահանջվող փայտանյութը բաց է թողնվում իջեցրած սակագնով։ Նայած նրանց նյութական դրության, սակագնի արժեքներից արվող զեղչերի չափը վորոշում են շրջգործկոմները և շրջանտառարդտնտեսությունները, ըստ վորում զեղչը պիտի լինի $25^{0}/_{0}$-ից վոչ պակաս։

1-ին կետում հիշատակված փայտեղեն ստացող այն տնտեսությունները, վորոնք տուժել են տարերային և այլ աղետներից, ինչպես նաև սակավազոր տնտեսություններին փայտեղեն բաց է թողնվում առանձին արտոնյալ պայմաններով, մինչև իսկ ձրիաբար, համապատասխան դեպքերում հաշվի առնելով նաև տնտեսությունից ստացված այլ արտոնությունները։

Ժամկետային ծառայության շարային և կրտսեր հրամանատարական կազմի զինվորականների այն ընտանիքներին, վորոնք չունեն և վոչ մի աշխատունակ անդամ,—փայտեղեն բաց է թողնվում ձրիաբար։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Անաշխատունակ հաշվում են.—

ա) 55 տարեկանից բարձր տղամարդիկ և 50 տարեկանից բարձր կանայք.

բ) հաշմանդամության 3 խմբերին պատկանող հաշմանդամները.

գ) կանայք՝ հետ ծննդաբերության և մինչև ծննդաբերությունը 2 ամսվա ընթացքում.

դ) կանայք, վորոնք խնամում են 8 տարին չլրացած յերեխաներին, յեղբայրներին ու քույրերին, և 18 տարեկանից փոքր անձինք։

3. Այնտեղ, վորտեղ կանգուն վիճակում փայտ բաց թողնելը հնարավոր չէ, այն փոխարինվում է արտոնյալ պայմաններով պատրաստի ձևով փայտանյութ բաց թողնելով։ Արտոնյալ պայմաններով պատրաստի անտառարտադրանք անտառում հանձնելը կատարվում է Հայանտառտրեստի լայն սպառման համար հատկապես առանձնացրած ֆոնդից, սակացուցակի մեծաքանակ գներից $15^{0}/_{0}$ զեղչով, կամ նշված գնի $10^{0}/_{0}$ զեղչով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—ա) Անտառանյութերի զեղչի չափը վորոշվում է, նկատի ունենալով անտառանյութ ստացողի նյութական դրությունը, ըստ վորում ժամկետավոր ծառայության շարային և կրտսեր հրամկազմի զինվորականների ընտանիքներին,—վորոնք չունեն վոչ մի աշխատունակ, անտառանյութ բաց է թողնվում առանց նյութական դրությունն ի նկատի առնելու,—սակացուցակի մեծաքանակ գներից $15^{0}/_{0}$ զեղչով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— բ) Արտոնյալ պայմաններով անտառանյութ բաց թողնելու դեպքում սահմանվում են շրջանառության տուրքի իջեցրած դրույքներ, այսինքն՝ 1) սակացուցակի մեծաքանակ գներից 15% զեղչով անտառանյութ բաց թողնելու դեպքում—15,6%, 2) սակացուցակի մեծաքանակ գներից 10% զեղչով անտառանյութ բաց թողնելու դեպքում—11,8%։

4. Փայտանյութը բաց է թողնվում ՀՍԽՀ Ժողկոմխորհի կողմից աշխատավոր բնակչության համար սահմանած նորմաներով։

5. Կանգուն վիճակում արտոնյալ ֆոնդից փայտեղեն բաց է թողնում Հայանտառտրեստը, իսկ ֆոնդերի բաշխումը, գնացուցակային արժեքների իջեցումը, ինչպես նաև փայտեղեն ստացողների վճարումների ժամկետների տարկետումները կատարում են տեղական շրջգործկոմները և շրջանտառտնտեսության ներկայացուցիչները։

6. Փայտեղենը բաց է թողնվում 1-ին կետում հիշված տնտեսությունների և ընտանիքների կողմից ներկայացված հայտերով. հայտերը ներկայացվում են համապատասխան շրջգործկոմին,—սրա կողմից նշանակված ժամկետին։ Այս ժամկետները նշանակվում են այն հաշվով, որ շրջանտառտնտեսություններն այդ մասին իրազեկ լինեն մինչև բաց թողման համար նշանակված ֆոնդերի բաշխումը։

Հայտերին պետք է կցված լինեն.—համապատասխան գյուղխորհրդի տեղեկանքը՝ արտոնյալ պայմանով փայտեղեն ստանալու իրավունքի, փայտեղեն ստացողի նյութական դրության և փայտեղենի կարիքի չափի մասին։

7. 2—5 կետերում նշված արտոնությունները ուժի մեջ են համարվում 6 ամիս հաշված՝ ա) բանվորա-գյուղացիական կարմիր բանակի շարքերից կամ ծառայությունից արձակվելու օրից այն անձնավորությունների համար, վորոնք հիշված են 1-ին կետի «ա» լիտերի 1—3 ենթակետերում, բ) նույն կետի «ա», «բ» կետերում հիշված անձնավորությունների մահվան մասին։

8. Կարմիր բանակայինների կոլտնտեսություններին հասարակական շենքեր կառուցելու և վերանորոգության համար փայտեղեն բաց է թողնվում կանգուն վիճակում. փայտեղենը բաց է թողնվում սահմանված կարգով, տվյալ կոլտնտեսության շինարարության հաստատված պլանի պահանջի չափով։

Կարմիր բանակայինների կոլտնտեսություններին հասարակական շենքերը տաքացնելու համար, կոլտնտեսությունը կազ-



մակերպվելու օրից, 3 տարի փայտեղեն բաց է թողնվում ձրիաբար, 6-րդ կետում նշված նորմաների սահմաններում։ Այդ ժամանակամիջոցը լրանալուց հետո, փայտեղեն բաց է թողնվում ընդհանուր հիմունքներով։

Կարմիր բանակայինների կոլտնտեսությունների վարչությունները փայտեղեն ստանալու իրենց հայտերը ներկայացնում են համապատասխան շրջգործկոմներին, 6-րդ կետում նշված ժամկետին։

9. Նկատի ունենալով ծառատունկերի դրությունը, փայտեղեն պետք բաց թողնել այն անտառամասերից, վորոնց փայտեղենն օգտագործելու առանձին դժվարություններ չեն ներկայացնի։

10. 1-ին կետում նշված արտոնյալ պայմաններով և ձրիաբար կանգուն վիճակում փայտեղեն բաց է թողնվում—աշխատավոր բնակչության կարիքները բավարարելուն հատկացրած հատատեղերի անտառտնտեսական ֆոնդից։

11. Կանգուն վիճակում արտոնյալ պայմաններով և ձրիաբար բաց թողնվող փայտապատրաստումների ժամանակ փայտեղեն ստացողները պարտավոր են ամբողջությամբ պահանջել փայտեղեն բաց թողնելու վերաբերյալ նորմալ պայմանները։

## ՀԱՏՎԱԾ II

## ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՂՄՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

12. Սույն հրահանգի առաջին կետում հիշված տնտեսություններին ու ընտանիքներին անտառային կողմնարդյունքների օգտագործումը տրվում է սույն հրահանգի 2-րդ կետի կարգով։

1) Կարմիր բանակայինների կոլտնտեսություններին անտառային կողմնարդյունքների օգտագործումը տրվում է ձրիաբար։

2) Արտոնությունները, օգտագործման չափն ու կարգը սահմանում են տեղական շրջգործկոմները և շրջանտառտնտեսությունները։

13. Շրջանտառտնտեսությունները կողմնարդյունքների չափը սահմանելու ժամանակ պետք է ելնեն փաստական հնարավորություններից, առաջին հերթին ապահովելով իրենց տնտեսության կարիքները. համաձայն ՀՍԽՀ Ժողկոմխորհի Կարգադրիչ նիստի 1933 թ. փետրվարի 27-ի № 5 արձանագրության

## ՀԱՏՎԱԾ III

## ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ՓԱՅՏԵՂԵՆ ԲԱՑ ԹՈՂՆԵԼՈՒ ՅԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՂՄՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

14. Շրջանտառարդտնտեսությունները, արտոնյալ պայմաններով ու ձրիաբար բաց թողնվող փայտեղենի և անտառային կողմնարդյունքների օգտագործման հաշիվները պահում են առանձին մատյաններում և տետրակներում։

Անտառժողկոմատի ն. Հայաստանի
լիազոր՝ Գ. ԱԹԱՐԲԵԳՅԱՆ

Անտառտնտեսության սեկտորի
վարիչ՝ Ա. ԱՌՈՒՇԵՂՅԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0404578

Գ ր ի

193
II
27445

**И Н С Т Р У К Ц И Я**

**о преследовании нарушений лесного устава**

СЕЛЬХОЗГИЗ 1934 ЭРИВАНЬ